**Սոցիալական ներդրումներ**
Social Investments

**ՎիվաՍել–ՄՏՍ–ը Հայաստանին**
VivaCell–MTS to Armenia
**2017**


**ՎիվաՍել–ՄՏՍ**
**«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ**
Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ
Հեռ.՝ +37460771111, +37493 568777
Ֆաքս՝ +37493298021
4/1 Argishti street, Yerevan 0015, RA
Tel.: +37460771111, +37493 568777
Fax: +37493298021
www.mts.am, info@mts.am


Սոցիալական ներդրումներ

# social investments 2017
# սոցիալական ներդրումներ




11 Հատոր
Edition


VIVACELL MTS



## Հարգելի՜ բարեկամ,

Այս հատորում Ձեզ ենք ներկայացնում 2017թ. իրականացրած ծրագրերը: Ավելի քան 11 տարի անընդմեջ ՎիվաՍել-ՄՏՍ-ը հավատարմորեն կյանքի է կոչում իր արժեհամակարգի հիմքում ընկած Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության օրակարգը:

Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իրականացվող սոցիալական ներդրումների համալիր ծրագրի առանձին ուղղություններն ընտրվում են` ելնելով առկա կարիքների գնահատումից, ծառացած խնդիրներին արձագանքելու հրատապությունից և երկրի կայուն զարգացման գործում դրանց կարևորությունից:

Այս տարի նույնպես մեզ հաջողվել է ոչ միայն շարունակել երկարաժամկետ և իրենց արդյունավետությունն ապացուցած ծրագրերի իրականացումը, այլև` ավելացնել նոր նախաձեռնություններ` ուղղված մշակույթի, կրթության, շրջակա միջավայրի պաշտպանության, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների, բնակարանաշինության, համայնքային ենթակառուցվածքների և ռազմավարական նշանակության մի շարք այլ ոլորտների զարգացմանը:

Մեզ ոգեշնչել և ուժ են տվել իրականացված ծրագրերի շոշափելի արդյունքները, և մենք հույս ունենք այդ հավատը փոխանցելու նաև Ձեզ: Մենք` վաղվա օրով մտահոգ քաղաքացիներս, հաղթահարելով բազմաթիվ մարտահրավերներ, պետք է շարունակենք կերտել մեր ապագան. ոչ ոք դա չի անելու մեր փոխարեն: Ընտրությունը մերն է. կարող ենք ապրել կամ բացառապես հանուն անհատական երջանկության` հոգ տանելով միայն մեր մասին, կամ` որպես երջանկության բանաձև դիտարկել հանրային բարօրության կերտմանը մեր մասնակցությունը: ՎիվաՍել-ՄՏՍ-ն ընտրել է երկրորդ` առավել բարդ և մարտահրավերներով լի ուղին, և շարունակելու է հավատարիմ մնալ հանրային բարօրությանը նպաստելու իր ընտրությանը:

**ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆ**

ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն

## Dear friend,

We meet you again this year to share with the achievements in 2017. For over 11 years, VivaCell-MTS has been committed to its Corporate Social Responsibility agenda that lies at the heart of our value system.

Different directions of the comprehensive social investment strategy are chosen as a result of evaluation of the needs of respective spheres, of the urgency for responding to existing problems and their importance in the sustainable development of the country.

This year, too, we have succeeded not only in continuing our long-term projects, which have proved to be highly efficient, but also in adding new initiatives aimed at fostering spheres of strategic importance such as culture, education, environmental protection, information and communication technologies, house building, and development of community infrastructures.

We have been inspired and encouraged by the long-term results of the implemented programs, and we hope that we can inspire you, too. We, the citizens concerned with our future, exposed to many challenges, are the ones to shape our collective perspective, and no one will be doing it for us. We are either to live limited to multiplying the happiness of our individual ego, without caring for others, or to seek our happiness in creating and being part of public good. VivaCell-MTS has chosen the more difficult and challenging path, and will stay true to the commitment of adding to the welfare of the society.

**RALPH YIRIKIAN**

VivaCell-MTS General Manager

## Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
## Information and Communication Technologies

- Աջակցություն «ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակ» նախաձեռնությանը
  Support to the “Award of the President of Armenia for Outstanding Contribution to Global IT” initiative
- Աջակցություն հանրակրթական դպրոցներում իրականացվող Տ2Տ փորձարարական ուսումնական ծրագրին
  Support to ICT educational pilot project implemented in high schools of Armenia
- Աջակցություն «Seedstars» միջազգային մրցույթի երևանյան փուլի իրականացմանը
  Support to the organization of Yerevan stage of the international competition “Seedstars”
- Աջակցություն Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
  Support to the Annual Microelectronics International Olympiad

## Կրթություն
## Education

- Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում
  Provision of tuition fee to students of universities of Armenia
- Բաց դռների օրերի և դասախոսությունների կազմակերպում
  Organization of open doors and lectures
- «VivaStart» կրթական ծրագրի իրականացում
  Organization of “VivaStart” educational program
- Համագործակցություն «Լույս» հիմնադրամի հետ՝ հայաստանցի ուսանողների կրթաթոշակի ապահովման նպատակով
  Cooperation with the “Luys” Foundation in providing scholarship to Armenian students
- Համագործակցություն «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության հետ
  Cooperation with “Junior Achievements of Armenia”
- Աջակցություն NASA-ի տիեզերական հավելվածների միջազգային վեցերորդ մրցույթի անցկացմանը
  Support to the organization of the 6th International NASA Space Apps Challenge
- Աջակցություն «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրին
  Support to “Teach for Armenia” project
- ՎիվաՍել-ՄՏՍ-ի տեխնոլոգիական կենտրոնի ստեղծում «Cityzen» մասնագիտությունների մանկական քաղաքում
  VivaCell-MTS technological center at the “Cityzen” kids’ city of professions

## Առողջապահություն
## Healthcare

- Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
  Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center
- Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
  Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families

## Մշակույթ
## Culture

- Աջակցություն Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբին
  Support to the Armenian National Philharmonic Orchestra
- Համագործակցություն «Արս Լունգա» դուետի հետ՝ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ձայնագրման գործում
  Cooperation with the “Ars Lunga” Duo for recording the works by Armenian composers
- Աջակցություն «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին
  Support to the “Golden Apricot” International Film Festival
- Աջակցություն Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբին
  Support to the State Youth Orchestra of Armenia
- Աջակցություն «Հովեր» պետական կամերային երգչախմբին
  Support to the “Hover” State Chamber Choir
- Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին
  Support to the “Paros” Chamber Choir of “Unison” NGO
- Աջակցություն «Web ծիրան» համահայկական առցանց կինոփառատոնին
  Support to “Web Apricot” Pan-Armenian Online Film Festival
- Աջակցություն «Հայկական ժողովրդական նվագարաններ» ալբոմի հրատարակմանը
  Support to the publication of the “Armenian National Instruments” album

## Սպորտ
## Sport

- Գործընկերություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների հետ
  Partnership with the National Football Teams of Armenia

## Շրջակա միջավայրի պաշտպանություն
## Environmental Protection

- Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Արևորդի» փառատոնին
  Support to the “SunChild” Festival of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
- Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Կանաչ շարժունակություն» նախագծին
  Support to the “Green Mobility” project by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
- Մասնակցություն «Հեծանիվով դեպի աշխատավայր» միջազգային նախաձեռնությանը
  Participation in “Bike to Work” international initiative
- Աջակցություն Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանում նոր անտառակայանի ստեղծմանը
  Support to the construction of a new Ranger Campus in the Caucasus Wildlife Refuge
- Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Արևորդի» էկո-ակումբներին
  Support to “SunChild” eco clubs of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
- Աջակցություն Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանում արջերի փրկարար և վերականգնողական առաջին կենտրոնի բացմանը
  Support to the opening of the first Bear Rescue and Rehabilitation Center in Armenia in the Caucasus Wildlife Refuge

## Կամավորական աշխատանքներ
## Volunteering

- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» հետ համատեղ
  Participation of VivaCell-MTS employees in the house building project in rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia
- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը համաքաղաքային շաբաթօրյակին և ծառատունկին
  Participation of VivaCell-MTS employees in the citywide clean-up day and tree planting
- Բժշկական քայլակների տրամադրում «Քայլմեդ» վերականգնողա-կան կենտրոնին՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների կողմից
  Provision of medical go-carts by VivaCell-MTS employees to the “Qaylmed” rehabilitation center
- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը Հայաստանի էկոհամակարգի պահպանմանն ուղղված ծառատունկին Ուրցաձորում
  Participation of VivaCell-MTS employees at the tree planting in Urtsadzor aimed at the preservation of the ecosystem of Armenia
- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը պրոֆեսոր Ռ.Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի՝ արյան դոնորության նախաձեռնությանը
  Participation of VivaCell-MTS employees in the blood donation initiative organized by the Hematology Center after professor R.H. Yeolyan

## Մարզեր
## Regions

- Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» հետ համատեղ
  Support to the house building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia
- Արտաքին լուսավորության լուսադիոդային (LED) համակարգերի տեղադրում գյուղական համայնքներում՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում
  Installation of LED street lighting systems in rural communities in the frames of the “Alternative Energy” project
- Արևային էներգիայի հիման վրա գործող ջեռուցման համակարգերի և արևային ջրատաքացուցիչների ներդրում գյուղական համայնքներում՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում
  Installation of solar heating systems and solar water heaters in rural communities in the frames of the “Alternative Energy” project
- Գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրում՝ «Համայնքային զարգացում» ծրագրի շրջանակում
  Provision of agricultural equipment in the frames of “Community Development” program

## Այլ
## Other

- Դասախոսություններ ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի և Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի կողմից
  Awareness lectures by the RA Minister of Justice Davit Harutyunyan and Human Rights Defender Arman Tatoyan
- Աջակցություն «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակաբաշխության անցկացմանը
  Support to the organization of the Aurora Prize for Awakening Humanity




# Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ

## Information and Communication Technologies






### Աջակցություն «ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակ» նախաձեռնությանը

ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի ամենամյա մրցանակը հիմնվել է 2009թ.՝ ՀՀ նախագահի հրամանագրով, և շնորհվում է ՏՏ ոլորտում բացառիկ ներդրումներ կատարած հեղինակավոր անհատների, ում ներդրումները ՏՏ ոլորտում բերել կամ բերում են հեղափոխական կամ համանման բնույթ ունեցող զարգացումների, որոնք դրականորեն են անդրադարձել կամ ներուժ ունեն դրականորեն անդրադառնալու պատմության ընթացքի վրա: Ութերորդ տարին անընդմեջ ՎիվաՍել–ՄՏՍ–ը ստանձնում է մրցանակաբաշխության գլխավոր գործընկերությունը: ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակի 2017թ. դափնեկիրը «Նեսթ Լաբս» ընկերության հիմնադիր, «iPod» ապրանքանիշի ստեղծող Թոնի Ֆադելն է:

### Support to the “Award of the President of Armenia for Outstanding Contribution to Global IT” initiative

Inaugurated in 2009 by the Decree of the President of Armenia, the Award of the President of the RA for Outstanding Contribution to Global IT is granted on an annual basis to an individual, whose internationally acclaimed contributions to IT have resulted in near–revolutionary or revolutionary developments that have positively impacted or hold the potential to positively impact the humanity. VivaCell–MTS has been the general partner of the initiative for eight years. For year 2017, the founder of “Nest Labs” company, the inventor of the “iPod” brand Tony Fadell was bestowed with the Award of the President of the Republic of Armenia for Outstanding Contribution to Global IT.








## Աջակցություն հանրակրթական դպրոցներում իրականացվող S2S փորձարարական ուսումնական ծրագրին

ՎիվաՍել–ՄՏՍ-ի մասնագետները վարպետության դասընթացներ են վարել Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (S2S) փորձարարական ուսումնական ծրագրով սովորողների համար: Ինտերակտիվ շփման, հարց ու պատասխանի միջոցով, աշակերտներն ամրապնդել են նախորդ կիսամյակի ընթացքում «Հեռահաղորդակցության հիմունքներ» առարկայից ձեռք բերած տեսական գիտելիքները և ձեռք բերել գործնական հմտություններ: «Հեռահաղորդակցության հիմունքներ» առարկան 2017 թվականից դասավանդվում է քառակողմ հուշագրով 22 կրթության և գիտության նախարարության, ՎիվաՍել–ՄՏՍ, «Սինոփսիս Արմենիա» և «Յունիքոմփ» ընկերությունների միջև ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում՝ Գյումրիի «Ֆոտոն» և Երևանի «Քվանտ» վարժարաններում, Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական և Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցներում, ինչպես նաև Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի՝ Երևանի տարածքում գործող ավագ դպրոցում:

## Support to ICT educational pilot project implemented in high schools of Armenia

VivaCell–MTS have held master classes for students of the Information and Communication Technologies (ICT) educational pilot project. In the course of discussions, the students gained a deeper understanding of the topics introduced by the "Basics of Telecommunication" subject as well as acquired practical skills. According to the four-partite memorandum, signed between the RA Ministry of Education and Science, Synopsys Armenia, VivaCell–MTS, and Unicomp companies, the "Basics of Communication" subject has been included in the curricula of Gyumri "Photon", Yerevan "Quantum" colleges, physics and mathematics school after Artashes Shahinyan, mathematics and natural sciences school in Vanadzor, and of the high school under National Polytechnic University in Yerevan.

### Աջակցություն «Seedstars» միջազգային մրցույթի երևանյան փուլի իրականացմանը

«Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանը» ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ համատեղ կազմակերպել է «Seedstars» միջազգային մրցույթի երևանյան փուլը: Միջոցառման ընթացքում 70 հայտատուիմուից ընտրված 11 ստարտափ Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնում ներկայացրել է իր արտադրանքը միջազգային և տեղական մասնագետներից կազմված ժյուրիի անդամներին: Ժյուրիի որոշմամբ արդյունքում «Seedstars» միջազգային մրցույթին Շվեյցարիայում Հայաստանը ներկայացրել է «Chessify» ստարտափը:

### Support to the organization of Yerevan stage of the international competition “Seedstars”

Microsoft Innovation Center Armenia in partnership with VivaCell-MTS organized the local stage of international “Seedstars” competition at the Innovative Solutions and Technologies Center. 11 startups selected out of 70 applications pitched their products to the jury, consisting of international and local experts. By the decision of the jury “Chessify” startup was chosen to represent Armenia at the international stage of the “Seedstars World” in Switzerland.













## Աջակցություն Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային

Միկրոէլեկտրոնիկայի միջազգային 12-րդ օլիմպիադային մասնակցությամբ աչքի են ընկել ոլորտի՝ մինչև 30 տարեկան տարիքային խմբի առավել տաղանդավոր ուսանողները: Մրցույթի եզրափակիչ փուլը կայացել է Երևանում՝ «Սինոփսիս Արմենիա» ընկերության կրթական բաժնում (SAED): 2017թ.-ի օլիմպիադայի շրջանակում մրցութային թեմաները ներառել են «Թվային IC նախագծումը և փորձարկումը», «Անալոգային և խառն ազդանշանային IC նախագծումը և փորձարկումը», «Կիսահաղորդիչ սարքերը և տեխնոլոգիաները», ինչպես նաև «Էլեկտրոնային նախագծային ավտոմատացման մաթեմատիկական և ալգորիթմային խնդիրները»: Օլիմպիադայի գլխավոր գործընկերն է ՎիվաՍել-ՄՏՍ-ը:

## Support to the Annual Microelectronics International Olympiad

The 12th Microelectronics International Olympiad highlighted some of the brightest, most talented students under the age of 30. The final stage of the 12th Microelectronics Olympiad took place in Yerevan, at the Synopsys Armenia Education Department (SAED). Olympiad topics for 2017 included Digital IC Design and Test, Analog and Mixed-Signal IC Design and Test, Semiconductor Devices and Technology, and Mathematic and Algorithmic Issues of Electronic Design Automation (EDA). VivaCell-MTS is the general partner of the Olympiad.




# Կրթություն
Education






## Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում

Կարևորելով մասնագիտական զարգացման հավասար հնարավորությունների ապահովումը՝ ՎիվաՍել–ՄՏՍ–ը ստանձնել է հատուկ կարիքներ ունեցող, ծնողազուրկ կամ սոցիալապես անապահով ընտանիքների՝ բարձր առաջադի–մություն ունեցող շուրջ 750 ուսանողի ուսման վարձի հատուցումը:

## Provision of tuition fee to students of universities of Armenia

Understanding the importance of providing equal opportunities for professional development, VivaCell–MTS covers the tuition fee of over 750 students from vulnerable social groups, as well as with special needs, who have a good standing at university.

## Բաց դռների օրերի և դասախոսությունների կազմակերպում

Իրազեկվածությունը և գործնական գիտելիքները կարևոր են մասնագիտական կողմնորոշման և զարգացման համար: ՎիվաՍել-ՄՏՍ-ը մշտապես կիսում է իր փորձը հեռահաղորդակցության ոլորտով և ընկերության կառավարման մշակույթով հետաքրքրվող երիտասարդների հետ, որոնք ցանկանում են պատկերացում կազմել ոլորտին առնչվող մասնագիտությունների վերաբերյալ:

## Organization of open doors and lectures

Practical knowledge and in-depth understanding are highly important for career orientation and development. VivaCell-MTS always shares its experience with young people interested in telecommunication sphere and Company's management culture, who want to develop understanding of various professions related to the sphere of telecommunications.











### «VivaStart» կրթական ծրագրի իրականացում

2015թ.–ից Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորն իրականացնում է «VivaStart» կրթական ծրագիրը, որը վաճառքի և բաժանորդների սպասարկման ոլորտում մասնագիտանալու մեկնարկային հնարավորություն է տալիս տարբեր բուհերի ուսանողների: Նախապատրաստական դասընթացներից հետո ուսանողները հնարավորություն են ունենում երկամսյա ժամանակահատվածում բուհական գիտելիքները դրսևորել գործնականում և սպասարկման կենտրոններում ձեռք բերել բաժանորդների հետ արդյունավետ, քաղաքակիրթ և պրոֆեսիոնալ շփման հարուստ փորձ: Ծրագիրն առանձնահատուկ է՝ ոչ միայն մայրաքաղաքի, այլև մարզային ներգրավվածություն ապահովելու առումով:

### Organization of “VivaStart” educational program

Starting 2015, Armenia’s leading telecommunications operator has launched “VivaStart” educational program, which gives early stage opportunities to students of various universities to master their aptitudes in sales and customer care sphere. Upon receiving the needed information during the preparatory courses, the students get a two-month opportunity to apply their university skills in practice and gain rich experience in efficient, fine-tuned and professional communication at service centers. The uniqueness of this program is conditioned by its outreach not only to Yerevan, but also to regions.

## Համագործակցություն «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության հետ

«Հայաստանի պատանեկան նվաճումների» նախաձեռնությամբ և ՎիվաՍել–ՄՏՍ–ի գործընկերությամբ՝ արդեն չորրորդ անգամ կայացել է «Բիզնես առաջադրանք» ամենամյա մրցույթը: Համատեղ նախաձեռնության նպատակը բիզնեսի և կրթության միջև երկխոսություն ստեղծելն ու դրանով իսկ ավագ դպրոցում սովորող աշակերտների շրջանում ձեռնարկատիրական հմտությունների և նորարարական մտածելակերպի զարգացմանը խթանելն է:

Միջոցառումը կազմակերպվել է «Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթություն» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակը հանրապետության ավելի քան 150 համայնքների շուրջ 3500 աշակերտի տնտեսագիտական և ձեռնարկատիրական գիտելիքներ հաղորդելն է, մասնավորապես՝ գործարար էթիկայի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմունքներին ծանոթացնելը և տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորություն ընձեռելը:

## Cooperation with “Junior Achievements of Armenia”

In the frame of “Junior Achievements of Armenia” and VivaCell–MTS partnership for the fourth time, the annual “Business task” competition has been held. The goal of a joint initiative is to establish a dialogue between business and education, and thus stimulate entrepreneurial skills and innovative thinking among high school students.

The event was organized within the framework of the “Entrepreneurial and Civic Education” program. The goal of the project is to provide economic and entrepreneurial knowledge to about 3500 students from 150 communities of Armenia, particularly, introducing business ethics and corporate social responsibility principles and providing theoretical knowledge in practice.












### Աջակցություն NASA–ի տիեզերական հավելվածների միջազգային վեցերորդ մրցույթի անցկացմանը

ԱՄՆ օդագնացության և տիեզերական հետա–զոտությունների ազգային ադմինիստրացիայի՝ NASA–ի տիեզերական հավելվածների միջազգային մրցույթի մասնակիցները 24 ժամվա ընթացքում մշակում և ներկայացնում են նորարարական լուծումներ և առաջարկներ՝ կիրառելով տվյալների վիրտուալացում, կոդավորում, դիզայն և այլ միջոցներ:

Մրցույթի հայաստանյան փուլին մասնակցության հայտ ներկայացրած թիմերը հավելվածային լուծումներ են առաջարկել «Երկիրը և մենք», «Կապույտ մոլորակ», «Զգուշացեք, առջևում վտանգ կա», «Մեր էկոլոգիական միջավայրը» և «Ստածեք և ստեղծեք» թեմաների շրջանակներում:

### Support to the organization of the 6th International NASA Space Apps Challenge

The participants of the international Space Apps Challenge of the NASA – the National Aeronautics and Space Administration of the USA –to develop and present innovative solutions and ideas with the help of data virtualization, coding, design and other means within 24 hours.

The participants of the Space Apps Challenge–Armenia developed applications on the following themes: “The Earth and Us”, “Planetary Blues”, “Warning: Danger Ahead”, “Ecological Neighborhood”, and “Ideate and Create”.






## Աջակցություն «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրին

«Դասավանդի՛ր, Հայաստան»–ը երկամյա դասավանդման ծրագիր է՝ Հայաստանի լավագույն երիտասարդ մասնագետների համար: Այն միտված է բացահայտելու մասնակիցների մասնագիտական և առաջնորդական ներուժը՝ միաժամանակ նպաստելով գյուղական համայնքների զարգացմանը: Ծրագրի մասնակիցները տեղաբաշխված են Հայաստանի մարզերի դպրոցներում, որտեղ կա համապատասխան երիտասարդ ուսուցիչների պակաս: Ծրագրի երկարաժամկետ տեսլականն է ձևավորել համախոհ առաջնորդներ, ովքեր հասկանում են հայկական կրթական համակարգի առանձնահատկությունները և ի վիճակի են ծրագիրը հաջողությամբ ավարտելուց հետո նպաստել նաև դրա հետագա զարգացմանը և արդիականացմանը՝ անկախ իրենց կարիերայի ընթացքից:

## Support to “Teach for Armenia” project

The Teach For Armenia Fellowship is a 2–year teaching program for Armenia’s top talent to unlock their professional and leadership potential while giving back to Armenian communities in need. Teach for Armenia Fellows are placed in the most underserved schools in regions of Armenia. Teach for Armenia envisions creating a community of like–minded leaders who thoroughly understand the Armenian educational system in its complexity. These leaders are able to contribute to its continued development and modernization across career paths upon completion of the Fellowship.

## ՎիվաՍել–ՄՏՍ–ի տեխնոլոգիական կենտրոնը՝ փոքրերի նորաբաց «Cityzen» մասնագիտությունների քաղաքում

«Cityzen»–ն իրական քաղաքի փոքր մոդել է՝ իր ենթակառուցվածքներով, օրենքներով և հաստատություններով: Այն անվտանգ կրթական և խաղային միջավայր է, որտեղ երեխաները կարող են ստանալ նոր գիտելիքներ, փորձ, վառ տպավորություններ և զարգացնել ինքնուրույն ստեղծագործելու հմտություններ:

ՎիվաՍել–ՄՏՍ–ի տեխնոլոգիական կենտրոնում երեխաները՝ ինտերակտիվ և պարզեցված պարապմունքների միջոցով կծանոթանան ժամանակակից տեխնոլոգիաներին և գիտելիքներ կստանան հեռահաղորդակցության ոլորտի վերաբերյալ, ինչպես նաև ավելի լայն պատկերացում կկազմեն, թե ինչպես է գործում անլար հաղորդակցությունը:

## VivaCell–MTS technological center at the “Cityzen” kids’ city of professions

“Cityzen” is a micro-model of a real urban environment with infrastructure, laws, and institutions. It is a safe educational gaming zone, where children can learn, acquire new skills, accumulate impressions, and develop their creative talents.

At VivaCell–MTS technological center children will get acquainted with modern technologies, learn about telecommunication through simplified interactive classes, and will shape an understanding of the ways wireless communication operates.







# Առողջապահություն
Healthcare







## Աջակցություն աուտիզմով երեխաների խնդիրներով զբաղվող «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնին»

ՎիվաՍել–ՄՏՍ–ի հետ գործընկերության շնորհիվ՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնը» միջանկյալ հարթակ է ձևավորել աուտիզմ և զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների համար: 30 երեխայի համար ստեղծվել է միջազգային չափորոշիչներին համապատասխանող «Ռեսուրսային դասասենյակ», որը թիրախային այս խմբին թույլ կտա առավելագույնս ներգրավվել կրթական ընդհանուր գործընթացում:

ՎիվաՍել–ՄՏՍ–ը նաև աջակցում է «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնում» կիրառական վարքային վերլուծության սկզբունքների սահմաններում հատուկ վերականգնողական թերապիա անցնող 45 երեխաների կրթավճարի ապահովմանը:

## Support to “International Child Development Center” for children with autism

Owing to VivaCell–MTS support, “International Child Development Center” (ICDC) has created an international platform for children with autism and other developmental disorders. A resource classroom with international standards has been opened for 30 children to give them opportunity to be maximally included in general education process.

VivaCell–MTS also supports in covering tuition of 45 children with autism who receive individual intensive educational treatment, based on the principles of applied behavioral analysis, at the “International Child Development Center”.

## Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին

Հաշմանդամություն ունեցող երեխաներին արդյունավետ աջակցության նպատակով ստեղծված «ՍՈՐՍ» հիմնադրամը թիրախային խմբում է ընդգրկել նաև նրանց ընտանիքներին: Հիմնադրամի նախաձեռնությամբ, ոլորտի առաջատար կազմակերպությունների և մասնագետների կողմից կազմակերպվել են մասնագիտական հատուկ նոր ուղղության՝ անհատական օգնականի վերապատրաստման դասընթացներ: Անհատական օգնականները տիրապետում են ոչ միայն նեղ մասնագիտական, այլև բժշկական որոշ գիտելիքների, որոնց շնորհիվ կարողանում են անհրաժեշտ խնամք իրականացնել: Մանկավարժ-օգնականները երեխաների հետ աշխատում են տանը, դպրոցում և վերականգնողական կենտրոններում:

Իր աջակցությամբ հիմնադրամին է միացել ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ նրանց համար իրագործելի դարձնելով սահմանած նպատակների իրականացումը:

## Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families

To provide efficient help to children with disabilities, the “SOURCE” Foundation, established three years ago, has also included their families to its target group. On the initiative of the “SOURCE” Foundation, classes, aimed at preparing individual tutors, have been organized by leading organizations and professionals in this sphere. The individual tutors, aside from the professional competence, also have basic literacy in medicine, which allows them to provide necessary care to children. The pedagogue-tutors take care of the children at home, at school and in rehabilitation centers. VivaCell-MTS has joined the Foundation in the implementation of its goals.







# Մշակույթ
Culture

## Աջակցություն Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբին

Արդեն շուրջ ութ տարի է, ինչ ՎիվաՍել–ՄՏՍ–ը կանգնած է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կողքին՝ որպես գլխավոր գործընկեր: Այս համագործակցության շնորհիվ նվագախումբն այսօր, հասնելով կատարողական բարձր մակարդակի, հնարավորություն ունի բուռն գործունեություն ծավալելու ինչպես Հայաստանում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս: Վերջին տարիներին ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանի գլխավորությամբ, հանդես է եկել Ֆինլանդիայի, Նորվեգիայի, Դանիայի, Լեհաստանի, Գերմանիայի, ԱՄՆ–ի, Մեքսիկայի, Լիբանանի, Ռուսաստանի և այլ երկրների մեծ բեմերում ու հեղինակավոր փառատոների շրջանակներում:

## Support to the Armenian National Philharmonic Orchestra

For already eight years, VivaCell–MTS has undertaken the general partnership of the Armenian National Philharmonic Orchestra. Owing to this cooperation, the Orchestra has reached a high level of performance, having outstanding concert tours not only in Armenia, but also abroad. Within last years, under the leadership of its artistic director and principal conductor Eduard Topchyan, the Philharmonic has participated in prominent festivals in Finland, Norway, Denmark, Poland, Germany, the US, Mexico, Lebanon, Russia and other countries.









## Համագործակցություն «Արս Լունգա» դուետի հետ՝ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ձայնագրման գործում

Հայկական ակադեմիական երաժշտության պահպանումն ու սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը 2011 թվականից գտնվում է այդ ուղղությամբ եզակի ծրագիր իրականացնող կողմերի՝ «Արս Լունգա» դուետի և ՎիվաՍել-ՄՏՍ-ի ուշադրության կենտրոնում: Համագործակցության շնորհիվ ձայնագրվել է դուետի և տրիոյի համար նախատեսված 18 ձայնասկավառակ՝ հայ 80 կոմպոզիտորների ստեղծագործություններով:

Այդ ինքնատիպ անթոլոգիան ներառում է 20-րդ դարասկզբից մինչև մեր օրերը ներկայացնող՝ ստեղծագործական մտքի և կոմպոզիտորական արվեստի լայն սպեկտր:

## Cooperation with the “Ars Lunga” Duo for recording the works by Armenian composers

The preservation of the Armenian academic music for coming generations has been at the center of “Ars Lunga” duo and VivaCell-MTS attention since 2011. The cooperating sides have initiated and implemented an unprecedented project: in the course of five years, 18 CDs have been released presenting works of 80 Armenian composers written for piano duo and trio. This unique anthology encompasses a wide range of traditions of Armenian academic music from the beginning of the 20th century till now.






## Աջակցություն «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին

Երևանի կինոտոնն անցած ճանապարհի տարեգրությունն ավելացրեց ևս մեկ տարով: Միջոցառումների բազմազանությամբ, ճանաչված կինոգործիչների, հյուրերի մասնակցությամբ և բազմաժանր ֆիլմերի ցուցադրությամբ ուղեկցվող փառատոնը համամարդկային արժեքներ փոխան-ցող դեսպան է տարբեր մշակույթներով առաջնորդվող ազգերի համար:

## Support to the "Golden Apricot" International Film Festival

Yet another year added to the history of the Yerevan film fest. "Golden Apricot" featuring a variety of events, renowned cinema personalities and guests, as well as a diversity of genres of the screened films has become a window to the world and an ambassador uniting nations with different cultures to share universal human values.






## Աջակցություն Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբին

Ութերորդ տարին անընդմեջ ՎիվաՍել–ՄՏՍ–ը ստանձնում է Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գլխավոր գործընկերոջ առաքելությունը: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորի երկարաժամկետ աջակցության շնորհիվ՝ նվագախումբը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ, զգալի ձեռքբերումներ է ունեցել դասական երաժշտության գլուխգործոցները հանրությանը ներկայացնելու գործում:

## Support to the State Youth Orchestra of Armenia

For already eight years, VivaCell-MTS undertakes the general partnership of the State Youth Orchestra of Armenia. Thanks to the long-term cooperation with Armenia's leading telecommunications operator VivaCell-MTS, the State Youth Orchestra of Armenia under the leadership of the Artistic Director and Principal Conductor Sergey Smbatyan has achieved considerable progress in promoting classical music among the public.







## «Հովեր»–ը շարունակում է հաջողությամբ հանդես գալ նոր նախաձեռնություններով

«Հովեր» պետական կամերային երգչախումբը շարունակում է ներկայացնել նորանոր ծրագրեր, որոնք միտված են նպաստելու ժամանակակից երգչախմբային արվեստի զարգացումներին՝ հարստացնելով հայ խմբերգային երաժշտության ներկապնակը:

## “Hover” continues to successfully appear with new initiatives

“Hover” State Chamber Choir continues to present new projects aimed at promotion of contemporary choral art by enriching the palette of the Armenian choral music.



## Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցության շնորհիվ՝ «Փարոս» ներառական կամերային երգչախումբը մասնակցություն է ունեցել մի շարք մրցույթ-փառատոների, ինչպես նաև համերգներով հանդես եկել Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

## Support to the “Paros” Chamber Choir of “Unison” NGO

Owing to VivaCell-MTS support, the “Paros” inclusive Chamber Choir has participated in a number of festivals and concerts in Armenia and beyond its borders.










**Աջակցություն «Web ծիրան» համահայկական առցանց կինոփառատոնին**

Արդեն վեցերորդ տարին իրականացվող համա-հայկական առցանց կինոփառատոնը կարևոր իրադարձություն է դարձել կինոարտադրությամբ հետաքրքրված երիտասարդների շրջանում: Մրցանակաբաշխության գլխավոր գործընկերն է ՎիվաՍել-ՄՏՍ-ը:

**Support to “Web Apricot” Pan-Armenian Online Film Festival**

